



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՐԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2023


Սեպտեմբերի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոոդերոլոգիայի բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերոլոգիայի կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Սեպտեմբերի երրորդ փասնօրյակում հանրապետությունում օդի միջին ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում մի փոքր դրական, առանձին լեռնային շրջաններում՝ բացասական շեղումով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները գրանցվել են Տավուշում՝ +22...+26°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +23...+25°C, նախալեռնային շրջաններում՝ +28...+30°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +25...+27°C, նախալեռնային շրջաններում՝ +18...+20°C, Շիրակում՝ +22...+27°C Կոթայքում՝ լեռնային շրջաններում՝ +22...+26°C, նախալեռնային շրջաններում՝ +25...+27°C, Գեղարքունիքում՝ +20...+24°C (Սեյունովկա՝ +15°C), Լոռիում՝ +19...+22°C, Արմավիրում՝ +28...+30°C, Արարատում՝ +28...+30°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +21...+24°C, նախալեռններում՝ +25...+30°C:


Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանը դիտվել են Տավուշում՝ +7...+12°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +2...+4°C, նախալեռնային շրջաններում՝ +8...+10°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +9...+12°C, նախալեռնային շրջաններում՝ +2...+7°C, Շիրակում՝ +2...+6°C, Կոթայքում՝ լեռնային շրջաններում՝ +3...+6°C, նախալեռնային շրջաններում՝ +9...+11°C, Գեղարքունիքում՝ +2...+6°C, Լոռիում՝ +5...+8°C (Տաշիր՝ +2°C), Արմավիրում՝ +8...+11°C, Արարատում՝ +8...+10°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 0...+3°C, նախալեռններում՝ +8...+11°C:

Տասնօրյակային տեղումներ




Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 7-39մմ (77-452%), Լոռիում՝ 7-14մմ (45-69%), Տավուշում՝ 4-11մմ (24-61%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 9-17մմ (65-96%), նախալեռներում՝ 1-2մմ (14-18%), Գեղարքունիքում՝ 2-11մմ (15-74%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 3-8մմ (19-65%), նախալեռներում՝ 1մմ (10%), Արմավիրում՝ 1-2մմ (18-31%), Արարատում՝ 2-4մմ (39-47%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 8մմ (8%), նախալեռներում՝ 3մմ (100%), Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ 2-38մմ (34-317), նախալեռներում՝ 4-6մմ (29-39%):

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Սեպտեմբերի երրորդ փասնօրյակում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները լեռնային շրջաններում գրանցվել են -1...+4°C, Արարատյան դաշտում, Տավուշի հովտային շրջաններում, Արագածոտնի և Վայոց ձորի նախալեռներում, Սյունիքի հովտային շրջաններում՝ +5...+10°C աստիճան:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Պյունդափայտե սևական մշակաբույսեր



Տասնօրյակի ընթացքում շարունակվել են գյուղափայտե սևական աշխատանքները:

Հովտային շրջաններում կատարվել է բանջարանոցային մշակաբույսերի, խաղողի, սերկևիլի, նռան, ընկույզի, լեռնային շրջաններում՝ հնդավորների, կարտոֆիլի, կաղամբի բերքահավաք:

Լեռնային և նախալեռնային շրջաններում շարունակվել են աշնանացան ցորենի ցանքի և նախացանքի աշխատանքները:

Տասնօրյակի ընթացքում դիտված տեղումները բարձրացրել են հողի խոնավության պաշարները՝ բարելավվելով նախացանքի, ցանքի, հատիկի աճի և զարգացման պայմանները: